ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/96

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թ. N 97

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ք.Երևան, Արշակունյաց 39

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵԹԳՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	16 հունվարի 2023 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	05 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	26-29 հունսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	02 հոկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	30 նոյեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԵԹԳՊՔ-ն գեղարվեստական կրթության ոլորտում իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Բոլոր կրթական ծրագրերը կազմված են Պետական կրթական չափորոշիչների հիման վրա: ՄԿԾ-ների նկարագրերում սահմանված են կրթական վերջնարդյունքները, նպատակները, բովանդակությունը, կատարման չափանիշները: Առկա են վերջնարդյունքների ապահովմանը միտված առաջադրանքներ: Առաջադրանքներն ունեն ստեղծագործական բնույթ, նպաստում են ուսանողների վերլուծական մտածողության զարգացմանը, սակայն դրանք ներառված չեն առարկայական նկարագրերում: Դասավանդման, ուսումնառության մեթոդները նպաստում են ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

ՄՈՒՀ-ն ունի դասախոսական կազմի գնահատման և խրախուսման որոշ մեխանիզմներ, ինչպես նաև ուսանողների առաջընթացի գնահատման քաղաքականություն: Գործում են ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ:

Քոլեջը կարողանում է պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտներ, որոնք նաև շարունակաբար համալրում են Քոլեջի դասախոսական կազմը և ապահովում կայուն սերնդափոխությունը:
ԵԹԳՊՔ-ն ունի կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, կրթական գործընթացները հիմնականում ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով:

2. Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը

ԵԹԳՊՔ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է հաստատության առաքելությանը, հիմնականում այն համահունչ է ՀՀ որակավորումների ազգային շրջանակին: Քոլեջն ունի սահմանված նպատակներ, որոնք որոշակիորեն արտացոլում են շահակիցների կարիքները: Մշակված են ԶԾ-ի իրականացման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ և ցուցիչներ:

Քոլեջը չունի միջնաժամկետ պլաններ, իսկ քոլեջի երկարաժամկետ՝ 5-ամյա գործողությունների պլանը չի ներառում ՌԾ-ի բոլոր ուղղություններով նախատեսված աշխատանքները: Սահմանված չեն նաև հաշվետվողականության հստակ մեխանիզմներ:
Քոլեջի կառուցվածքը հստակ չէ և հիերարխիկ կապերն ակնառու չեն: Հստակեցված չէ գործառույթների և պատասխանատվության շրջանակը: Որոշումների կայացման գործընթացում շահակիցները չունեն ակտիվ ներգրավվածություն: Բյուջեի բաշխումը չի բխում ԶԾ-ից:
Որակի ապահովման համակարգը Քոլեջում դեռևս ձևավորման փուլում է: Հստակ սահմանված չեն ՈԱ նպատակները, դեռևս հստակեցված չեն գործառույթները, գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների, խնդիրների վերհանման կանոնակարգված մեխանիզմներ: Մշակված չէ ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների իրականացման մեթոդաբանությունը: Որակի կառավարման գործընթացում ևս ներքին և արտաքին շահակիցներն ակտիվ մասնակցություն չունեն: Որակի ապահովման ստորաբաժանումը չի ապահովում հավաստի տվյալներ որոշումների կայացման համար:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:***

ԵԹԳՊՔ-ում իրականացվում են դիմորդների հավաքագրման և ընդունելության կանոնակարգված գործընթացներ: Գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ: Ուսանողներին տրամադրվում են ընթացիկ խորհրդատվություններ դասախոսների կողմից, սակայն այդ աշխատանքները համակարգման կարիք ունեն: Ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով գործում է Ուսանողական խորհուրդ, առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Քոլեջի Զարգացման ծրագրում հետազոտությունը որպես առաջնահերթություն և հետաքրքրություն սահմանված չէ: Միևնույն ժամանակ, ելնելով իրականացվող մասնագիտությունների առանձնահատկություններից, հետազոտական-վերլուծական բաղադրիչը դրված է ուսանողների կողմից իրականացվող յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքում: Առկա են հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցման մոտեցումներ: Ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են ուսանողների հետազոտական, վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Քոլեջի դասախոսները իրենց գործունեության ընթացքում մշակել է տարբեր ուղեցույցներ և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Արտաքին կապերի ու միջազգայնացման ուղղությամբ սահմանված նպատակները չափելի չեն և դեռևս ինստիտուցիոնալ հիմքեր չունեն:

Հաստատության արտաքին կապերը չեն ապահովում փորձի փոխանակման և միջազգայնացման նախանշված նպատակների իրականացումը, պատասխանատվության գործառութային շրջանակը հստակեցված չէ: Գործատուների հետ համագործակցությունը կրում է հատվածային բնույթ: Արվեստի ուղղությամբ ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը չի հանգեցնում քոլեջի կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը: Ներքին շահակիցների օտար լեզուների իմացության ցածր մակարդակը խոչնդոտում է միջազգային ծրագրերում քոլեջի ներգրավմանը և կրթական ծրագրերում միջազգային փորձի տեղայնացմանը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» **ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - Զարգացման ծրագրի գնահատման գործուն մեխանիզմների ներդրմանը,
   - ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի բարելավմանը

- կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, մշտադիտարկման մեխանիզմների ներդրմանը,
- ուսանողներին ներկայացվող հետազոտական, ստեղծագործական առաջադրանքները կրթական ծրագրերում ներառելու անհրաժեշտությանը և դրանց գնահատման մեխանիզմների մշակմանը,
- դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
- ներքին շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը,
- քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024թ. փետրվարի 15
ք.Երևան